

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՏԱՇՐՋԱՆԻ 8-ԸՆԴ ՆԻՍՏԻ

Ք.Երևան
Ժ.11.00

23 դեկտեմբերի 2010թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 45 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Երևանի վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գ. Գասպարյանը առաջարկեց Երևանի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմում կատարել փոփոխություն՝ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամներ՝ հանձնաժողովի քարտուղար Արմեն Հակոբյանի և հանձնաժողովի անդամ Իշխան Դարբինյանի փոխարեն, որոնք նիստից հարգելի պատճառով բացակայում են, առաջադրել Հակոբ Այվազյանի և Զիվան Պողոսյանի թեկնածությունները:

ՈՐՈՇՎԵՑ - Երևանի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմում ընտրել «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Հակոբ Այվազյանին և Զիվան Պողոսյանին:

Քաղաքապետ Կ. Կարապետյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.155-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Երևանի զարգացման 2011թվականի ծրագրի հաստատման մասին:
4. Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին:
5. Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 3 հասցեի շենքի առաջին հարկի 214.9 քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:
6. Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի հ.5649-Ա, 5661-Ա, 5662-Ա, 5663-Ա որոշումներին համաձայնություն տալու մասին:
7. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
8. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
9. Երևանի Բուզանդի հ.33/2 հասցեում գտնվող կաթսայատունը անհատույց օգտագործման հանձնելու մասին:
10. Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը անհատույց օտարելու մասին:
11. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանը անհատույց օտարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի ավագանու 2010թ. դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

2. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.155-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.155-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց նախաձեռնության հեղինակ, «Բարգավաճ Հայաստան խմբակցության» ղեկավար Գ.Գասպարյանը:

Նախագծի վերաբերյալ իր տեսակետը ներկայացրեց Երևանի ավագանու «Հանրապետական» խմբակցության անդամ Ն.Նահապետյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել 2010 թվականի նոյեմբերի 26-ի «Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2011 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» №155-ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները`

1) 1-ին կետի 4-րդ ենթակետից հանել «, (ինչպես նաև 2-րդ գոտում ներառվում են 1-ին գոտում ընդգրկված փողոցներին հարող բակային տարածքները):» բառերը.

2) 1-ին կետի 4-րդ ենթակետի №1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ` համաձայն №1 հավելվածի.

3) 1-ին կետի 4-րդ ենթակետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4-րդ գոտում ընդգրկվում են №1 հավելվածում չներառված փողոցներն ու տարածքները:»:

4) 1-ին կետի 5-րդ ենթակետից հանել «, (ինչպես նաև 2-րդ գոտում ներառվում են 1-ին գոտում ընդգրկված փողոցներին հարող բակային տարածքները):» բառերը.

5) 1-ին կետի 5-րդ ենթակետի №2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ` համաձայն №2 հավելվածի.

6) 1-ին կետի 5-րդ ենթակետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«. 4-րդ գոտում ընդգրկվում են №2 հավելվածում չներառված փողոցներն ու տարածքները:»/հավելվածները կցվում են /:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45

դեմ – 0

ձեռնպահ – 0

3. ԼՍԵՑԻՆ – Երևանի զարգացման 2011թվականի ծրագրի հաստատման մասին:

«Երևանի զարգացման 2011թվականի ծրագրի հաստատման մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Արևշատյանը:

Նախագծի վերաբերյալ իրենց տեսակետները ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը և Երևանի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հ.Պողոսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Որպես հիմք ընդունել Երևանի զարգացման 2011թ. ծրագիրը /կցվում է/:

4. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին:

«Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսների վարչության պետ Վ. Նիկոյանը:

Նախագծի վերաբերյալ իր տեսակետը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել՝

- 1) Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեն՝
ա. եկամուտների գծով՝ 55,796,447.9 հազ. դրամ,
բ. ծախսերի գծով՝ 58,296,447.9 հազ. դրամ,
գ. դեֆիցիտը (պակասուրդը) 2,500,000.0 հազ. դրամ:
- 2) Երևանի 2011 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն հավելված հ.1-ի.
- 3) Երևանի 2011 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն հավելված հ.2-ի.
- 4) Երևանի 2011 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված հ.3-ի.
- 5) Երևանի 2011 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված հ.4-ի.
- 6) Երևանի 2011 թվականի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված հ.5-ի.
- 7) Երևանի 2011 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված հ.6-ի.
- 8) սույն որոշման հ.6 հավելվածով հաստատված հատկացումների վերծանումը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների)՝ համաձայն հավելված հ.7-ի:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը՝ ըստ ստացող կազմակերպությունների /հավելվածները կցվում են/:

5. ԼՍԵՑԻՆ – Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 3 հասցեի շենքի առաջին հարկի 214.9 քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

«Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 3 հասցեի շենքի առաջին հարկի 214.9 քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Մոսկովյան փողոց թիվ 3 հասցեի շենքի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.09.2005թ հ.1626147 վկայական) առաջին հարկի 214.9քմ մակերեսով տարածքը (այսուհետ՝ գույք) անհատույց օգտագործման իրավունքով հինգ տարի ժամկետով տրամադրել Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հասարակական կազմակերպությանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՍԵՑԻՆ – Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի հ.5649-Ա, 5661-Ա, 5662-Ա, 5663-Ա որոշումներին համաձայնություն տալու մասին:

«Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի հ.5649-Ա, 5661-Ա, 5662-Ա, 5663-Ա որոշումներին համաձայնություն տալու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի «Կռունկ-Մալաթիա» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին» N5649-Ա, ««Քանաքեռ-Զեյթուն բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին» N5661-Ա, ««Նուբարաշեն» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին» N5662-Ա, ««Անխափան վերելակ» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին» N5663-Ա որոշումներին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՍԵՑԻՆ – Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

«Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Գ.Հակոբյանը:

ՈՐՈՇՎԵՑ –1.«Հայաստանի թատերական գործիչների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02505418/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի 13 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 1689.9 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 1234.6 հազար դրամ, տույժ՝ 420.3 հազար դրամ, տուգանք՝ 35.0 հազար դրամ/:

2.«Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02508776/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան 25 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 8924.5 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 3784.4 հազար դրամ, տույժ՝ 1889.4 հազար դրամ, տուգանք՝ 3250.7 հազար դրամ/:

3.Հայաստանի ճարտարապետների միությանը /ՀՎՀՀ 00007258/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 17 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 380.6 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 380.6 հազար դրամ/:

4.«Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02511007/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Վարդանանց 18 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 3544.6 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 3137.9 հազար դրամ, տույժ՝ 406.7 հազար դրամ/:

5.«Հայաստանի գրողների միություն» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 00015135/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 3 և Արաբկիր վարչական շրջանի Կասյան 3 հասցեներում գտնվող

շինությունների մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 7735.6 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 4206.9 հազար դրամ, տույժ՝ 3450.8 հազար դրամ, տուգանք՝ 77.9 հազար դրամ/:

6. Հայաստանի նկարիչների միությանը /ՀՎՀՀ 02511023/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Աբովյան 16 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 3616.7 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 2598.0 հազար դրամ, տույժ՝ 1018.7 հազար դրամ/:

7. «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 01505571/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Իսահակյան 18, Քաջազունի 1 և Վարդանանց 109 հասցեներում գտնվող շինությունների մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 2629.9 հազար դրամ գումարի չափով, /ապառք՝ 734.4 հազար դրամ, տույժ՝ 1.7 հազար դրամ, տուգանք՝ 1893.8 հազար դրամ/:

8. «Միլվա Կապուտիկյան» գրական հիմնադրամին /ՀՎՀՀ 00078241/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան անց. 1շ. 26բն. հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 193.1 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 84.0 հազար դրամ, տույժ՝ 37.7 հազար դրամ, տուգանք՝ 71.4 հազար դրամ/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՍԵՑԻՆ – Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

«Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Գ. Հակոբյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբեկտ համարվող գույքային միավորների գույքահարկի ժամկետանց հարկային պարտավորությունների մասով (մինչև 2006-թ. ներառյալ ընկած ժամանակահատվածը) տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 36,315.6 հազար դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՍԵՑԻՆ – Երևանի Բուզանդի հ.33/2 հասցեում գտնվող կաթսայատունը անհատույց օգտագործման հանձնելու մասին:

«Երևանի Բուզանդի հ.33/2 հասցեում գտնվող կաթսայատունը անհատույց օգտագործման հանձնելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող՝ 02.03.2010թ. տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման հ.2277777 վկայականում նշված 225.2քմ մակերեսով նկուղը և 1-ին հարկի 106.6քմ մակերեսով հ.1 սենյակը (կաթսայատան համար նախատեսված մասը) անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Գրիար-Սպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ այն ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը անհատույց օտարելու մասին:

«Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը անհատույց օտարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

Նախագծի վերաբերյալ իր տեսակետը ներկայացրեց Երևանի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հ.Պողոսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Վարդանանց 65 հասցեի մարզադաշտը, կաթսայատունը, դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ համապատասխանաբար 55476.7քմ և 143.3քմ մակերեսներով հողամասերը սեփականության իրավունքով անհատույց /նվիրատվությամբ/ օտարել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանը անհատույց օտարելու մասին:

«Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանը անհատույց օտարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Չեխովի փողոցի հ.20 շենքի հ.1 բնակելի տունը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 09.09.2010թ. հ.2733315 վկայական) սեփականության իրավունքով անհատույց փոխանցել /նվիրաբերել/ քաղաքացի Գևորգ Մադաթյանի /անձնագիր՝ AG0297978 տրված 29.05.2004թ. 003 կողմից/ 9 անձից բաղկացած ընտանիքին /ինքը, կինը՝ Մաթենիկ Բանդուկանյանը, երկու աղջիկները՝ Անահիտ և Դիանա Մադաթյանները, հայրը՝ Էդուարդ Մադաթյանը, մայրը՝ Անահիտ Սահակյանը, քույրը՝ Լիլիթ Մադաթյանը, պապը՝ Արմենակ Մադաթյանը, տատը՝ Հայաստան Գևորգյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ